

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 26/5

4 նոյեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Հակորջանյանի և Գալստյանի ՀԷԿ» ՍՊԸ 06.10.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Գորիսի ՏՀՏ պետի թիվ 84 որոշումը մասնակի ուժը կորցրած ճանաչելու մասին:

«Հակորջանյանի և Գալստյանի ՀԷԿ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

ՀՀ ՖՆ Գորիսի ՏՀՏ-ի (հետագայում՝ ՏՀՏ) կողմից Հայփոստի միջոցով բողոքաբեր «Հակորջանյանի և Գալստյանի ՀԷԿ» ՍՊԸ-ին (հետագայում՝ ՍՊԸ) է ուղարկվել 29.05.2014 թ-ի թիվ 1329 գրությունը և ամսաթիվ չունեցող թիվ 84 որոշումը, որով ՏՀՏ-ն որոշել է ՍՊԸ-ից գանձել 9.762.252 ՀՀ դրամ: Նշված փաստաթղթերը ՍՊԸ-ն ստացել է 03.06.2014 թ-ին, ինչը նշանակում է, որ թիվ 84 որոշումն ուժի մեջ է մտել 04.06.2014 թ-ին (հիմք՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60 հոդված):

Ըստ թիվ 84 որոշման, 29.05.2014 թ-ի դրությամբ ՍՊԸ-ն ունեցել է 9.762.252 դրամի չափով չկատարված վճարային պարտավորություն: Մասնավորապես, ԱԱՀ-ի գծով պարտավորությունը կազմում է 4.491.430 դրամ, որից հարկ 4.107.229 դրամ, տույժ 384.201 դրամ:

Եկամտային հարկի գծով պարտավորությունը կազմում է 785.187 դրամ, որից հարկ 696.949 դրամ, տույժ 88.238 դրամ:

Շահութահարկի գծով պարտավորությունը կազմում է 4.058.252 ՀՀ դրամ, որից հարկ 3.840.507 դրամ, տույժ 217745 դրամը, ինչպես նաև շահութահարկի 10%, որը կազմում է 427.383 դրամ:

Հարկ է նշել, որ ՏՀՏ-ն ՍՊԸ-ին չի ծանուցել վերջինի նկատմամբ վարչական վարույթ սկսելու և/կամ իրականացնելու մասին: Այսինքն, ՏՀՏ-ն իր նախաձեռնությամբ ձեռնարկված վարչական վարույթի գոյության, դրա ընթացքի մասին ՍՊԸ-ին չտեղեկացնելով և չլսելով նրա դիրքորոշումը, կայացրել է թիվ 84 որոշումը: Ներկայացված եղանակով թիվ 84 որոշումը կայացնելով ՏՀՏ-ն խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 2-րդ մասի և 38 հոդվածի 1-ին մասի պահանջները, ինչպես նաև ՍՊԸ-ին գրկել է նույն օրենքի 39 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով իրեն վերապահված իրավունքները կենսագործելու հնարավորությունից:

ՍՊԸ-ն կարծում է, որ ՏՀՏ-ի թիվ 84 որոշումը ենթակա է մասնակի ուժը կորցրած ճանաչման կամ վերացման, քանի որ ՍՊԸ-ն.

- 02.06.2014 թ-ի թիվ 088 վճարման հանձնարարագրով վճարել է 4.246.877 դրամ, որպես 2014 թ-ի ապրիլ ամսվա արդյունքներով վճարման ենթակա ԱԱՀ գումար, իսկ 06.06.2014 թ-ի թիվ 092 վճարման հանձնարարագրով վճարել է թիվ 84 որոշմամբ հաշվարկված 384.201 դրամ ԱԱՀ-ի գծով տույժի գումարը: Նշված վճարումների արդյունքում թիվ 84 որոշման մեջ ներառված 29.05.2014 թ-ի դրությամբ ԱԱՀ-ի գծով պարտքեր առկա չեն:

- 02.06.2014 թ-ի թիվ 087 վճարման հանձնարարագրով վճարել է 691.057 դրամ, որպես 2014 թ-ի ապրիլ ամսվա արդյունքներով վճարման ենթակա եկամտային հարկի գումար, իսկ 06.06.2014 թ-ի թիվ 093 վճարման հանձնարարագրով վճարել է թիվ 84 որոշմամբ հաշվարկված 88.238 դրամ եկամտային հարկի գծով տույժի գումարը:

Նշված վճարումների արդյունքում թիվ 84 որոշման մեջ ներառված 29.05.2014 թ. դրությամբ եկամտային հարկի գծով պարտքեր առկա չեն:

Վերը նշված վճարումները կատարելուց և թիվ 84 որոշման մեջ նշված ԱԱՀ-ի ու եկամտային հարկի գծով 29.05.2014 թ-ի դրությամբ բոլոր պարտքերը մարվելուց հետո ՏՀՏ-ն թիվ 84 որոշումը մասնակի չի վերանայել, չնայած որ այդ առնչությամբ ՍՊԸ-ն 05.08.2014 թ-ին դիմում է ներկայացրել ՏՀՏ, որն այն ստացել է 07.08.2014 թ-ին, սակայն մինչև օրս թողել է անպատասխան:

Ելնելով ստեղծված իրավիճակից և օգտվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով վերապահված իրավունքից ՍՊԸ-ն խնդրում է փոփոխել ՏՀՏ-ի թիվ 84 որոշումը և համապատասխանաբար մասնակի ուժը կորցրած ճանաչել կամ մասնակի վերացնել թիվ 84 որոշման ԱԱՀ-ին և եկամտային հարկին վերաբերվող մասը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Գորիսի ՏՀՏ պետը, քննարկելով «Հակորջանյանի և Գալստյանի ՀԷԿ» ՍՊԸ վերաբերյալ վարչական վարույթի նյութերը ընդունել է թիվ 84 որոշումը (այսուհետ նաև Որոշում), համաձայն որի 29.05.2014 թ-ի դրությամբ ընկերության չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 9.762.252 դրամ, որից ԱԱՀ-ի մասով 4.491.430 դրամ, շահութահարկի մասով 4.058.252 դրամ, եկամտահարկի մասով 785.187 դրամ:

Գանգատում բերված պնդումների վերաբերյալ, որ Գորիսի ՏՀՏ կողմից ընկերությանը չի ծանուցվել վերջինիս նկատմամբ վարչական վարույթ սկսելու և/կամ իրականացնելու մասին, նշվեց հետևյալը:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի համաձայն՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև Օրենք) 33-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթը հարուցվում է այն գործողության (գործողությունների) սկսման օրվանից, որը նպատակամղված է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը:

Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է:

Քննարկվող դեպքում հարկ վճարողից ժամանակին չվճարված պարտավորությունների գումարները գանձելու նպատակով հարուցված վարչական վարույթի մասին գանգատաբերին ծանուցելու պարտականություն չի առաջացել, քանի որ Որոշումն ընդունվել է հարկային մարմնում առկա ապացույցների հիման վրա, երբ վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը չի գերազանցել երեք օրը:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված պահանջին, այն է՝ Որոշմամբ ԱԱՀ-ի և եկամտային հարկի գծով առաջադրված պարտավորությունները մարված լինելու հիմքով Որոշումը մասնակի ուժը կորցրած ճանաչելու մասին, ապա այդ կապակցությամբ նշվեց, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նման ընթացակարգ նախատեսված չէ:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Գորիսի ՏՀՏ պետի թիվ 84 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝



Գ. ՄԱՇԱԴՅԱՆ